ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 84-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՊԱՅՄԱՆՈՎ) ԳՐԱՆՑԵԼՈՒ, ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25.12.2019Թ. N 410-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով Արսեն Գառնիկի Միսկարյանի դիմումը, անձնագրի պատճենը, Հայաստանի Հարնապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 13.11.2019թ. թիվ ԼԴ2/1359/02/19 քաղաքացիական գործով վճիռը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված շինության և հողամասի հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքի Դեբեդ թաղամասի արևելյան մասում գտնվող, 847.7 քմ մակերեսով շինությունների (գրասենյակների) նկատմամբ ճանաչել Արսեն Գառնիկի Միսկարյանի սեփականության իրավունքը:
2. Շինության գործառնական նշանակությունը համարել փոփոխված, որպես հասարակական նշանակության (գրասենյակներ):
3. Ալավերդի համայնքի Դեբեդ թաղամասի արևելյան մասում գտնվող հասարակական գրասենյակներին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, N 38/6 փոստային հասցե:
4. Վերականգնել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, N 38/6 հասցեում գտնվող հասարակական գրասենյակների շենքի զբաղեցրած 0.1373 քմ մակերեսով (ծածկագիր՝ 06-002-0165-0003) հողամասի հողհատկացման հիմքերը,

սեփականության իրավունքը (պայմանով), հետագա գործարք կատարելու դեպքում վճարելով տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքը:

5. Հողամասում առկա է ինքնակամ կառուցված ընդհանուր 62.89 քմ արտաքին մակերեսով (ներքին 50.7 քմ մակերեսով) կաթսայատուն, որը ենթակա է գրանցման նշագծված տարբերակով:
6. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
7. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
8. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
9. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 25.12.2019թ. «Հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, սեփականության իրավունքով (պայմանով) գրանցելու, գույքի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» N 410-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 83-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.03.2020Թ. N 67-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0202-0078), 0.01426 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, N 202/78 փոստային հասցե:
2. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 06.03.2020թ. «Փոստային հասցե տրամադրելու մասին» N 67-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 12
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 82-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20.06.2019Թ. N 224-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ կետով, և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված տնտեսական խանութը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով համայնքի ավագանու 27.02.2020թ. N 11-Ա, համայնքի ղեկավարի 06.03.2020թ. N 69-Ա որոշումները, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի Պղնձագործների փողոցի հյուսիսային մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 93.45 քմ արտաքին մակերեսով (83.7 քմ ներքին մակերեսով) տնտեսական խանութի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի Պղնձագործների փողոցի հյուսիսային մասում գտնվող, 1988թ. ինքնակամ կառուցված, 93.45 քմ արտաքին մակերեսով տնտեսական խանութը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.01368 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի Պղնձագործների փողոցի հյուսիսային մասում գտնվող տնտեսական խանութին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Պղնձագործների փողոց, N 3/1 փոստային հասցե:
4. Շինության զբաղեցրած 0.01368 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված տնտեսական խանութի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Սուսաննա Աղվանյանին, օրինականացված տնտեսական խանութը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:
7. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 20.06.2019թ. «Ինքնակամ կառուցված տնտեսական խանութի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 224-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 12
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 81-Ա

ԳՈՀԱՐ ԷԴՈՒԱՐԴԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 11.03.2020թ. թիվ 2 արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի Սպանդարյան 11 հասցեի բնակիչ Գոհար Էդուարդի Թումանյանին նշանակել դատական կարգով անգործունակ ճանաչված Կամո Գուրգենի Շահվերդյանի /ծնված՝ 26.04.1963թ./ խնամակալ:
2. Գոհար Էդուարդի Թումանյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու Կամո Գուրգենի Շահվերդյանին հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը՝ խնամարկյալին պահելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 11
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 80-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՔԱՅԼԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ, 67-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 27.02.2020թ. N 9-Ն և N 10-Ն որոշումները, համայնքային սեփականության իրավունքի վկայականները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Թույլատրել կատարելու համայնքի վարչական տարածքում գտնվող ներքոհիշյալ հողամասերի աճուրդ-վաճառք կառուցապատման նպատակով՝ համապատասխան մեկնարկային գներով, 15000 դրամ աճուրդի մասնակցության վճարով և մեկնարկային գնի 5% քայլի չափով.
   1.1 Ալավերդի համայնք, Ալավերդի քաղաք, Սողոմոն Թեհլերյան փողոց, N 1/2 հասցեում գտնվող, 06-002-0012-0080 ծածկագրով, հասարակական կառուցապատման 0.004 հա մակերեսով հողամասը՝ հասարակական օբյեկտ կառուցելու համար, 200000 դրամ մեկնարկային գնով:
   1.2 Ալավերդի համայնք, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/33-49/3 հասցեում գտնվող, 06-002-0060-0005 ծածկագրով, բնակելի կառուցապատման 0.0036 հա մակերեսով հողամասը՝ ավտոտնակ կառուցելու համար, 108000 դրամ մեկնարկային գնով:
2. Վերը նշված հողամասերի աճուրդային եղանակով օտարումը կազմակերպել սահմանված կարգով:
3. Բոլոր վճարումները կատարել ՀՀ արժույթով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 11
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 79-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.03.2020Թ. N 63-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 06.03.2020թ. «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նկատմամբ կառուցապատման նպատակով աճուրդ-վաճառք կայացնելու թույլտվություն տալու, աճուրդի մեկնարկային գին, մասնակցության վճար և աճուրդի քայլի չափ սահմանելու մասին» N 63-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 11
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 78-Ա

06-002-0063-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ, 0.12 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ, ԱՆԱՍՆԱԳՈՄԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.02369 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱՁԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 1-ին և 3-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ բնակելի տունը, բաց պատշգամբը, անասնագոմը, պարիսպը չեն խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Սեյրան Վաղարշակի Սիմոնյանի լիազորված անձ՝ Սուսաննա Վաղարշակի Երիցյանի դիմումը, անձնագրի պատճենը, լիազորագիրը, ժառանգության իրավունքի վկայագիրը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 07.02.2020թ. թիվ 0-40 տեղեկանքը, տնտեսական գրքից 01.12.1993թ. 20/9 որոշման քաղվածքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասի հյուսիսային մասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0063-0008), 1969 թվականին կառուցված բնակելի տունը, բաց պատշգամբը, անասնագոմը, պարիսպը, ինչպես նաև կառուցման և սպասարկման համար զբաղեցրած 0.12 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի ուժով համարել Սեյրան

Վաղարշակի Սիմոնյանի (ծնված՝ 09.12.1957թ.) և Գրետա Մաքսիմի Սիմոնյանի (ծնված՝ 05.04.1966թ.) համասեփականությունը:

2. Սեփական ճանաչված 0.12 հա մակերեսով հողամասից սահմանազատված, ավել օգտագործվող 0.02369 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Սեյրան Վաղարշակի Սիմոնյանի և Գրետա Մաքսիմի Սիմոնյանի համասեփականությունը:
3. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասի հյուսիսային մասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, Միկոյան փողոց, N 2 փոստային հասցե:
4. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 10
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 77-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԱՀԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ հոդվածով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 27.02.2020թ. N 15-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.06.2014թ. ««Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագրի շրջանակներում «Նոյեմբերյան» և «Լալվար» 110 կՎ ԷՀՕԳ փոխարինման մասին» թիվ 599-Ն որոշման պահանջները, ՀՀ համայնքների ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-76 դրական եզրակացությունը, ՎԶՄԲ կողմից ֆինանսավորվող «Էլեկտրակառավարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Նոյեմբերյան» և «Լալվար» 110 կՎ ԷՀՕԳ փոխարինման համար նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցման ու սպասարկման անհրաժեշտությունը, համայնքային սեփականության իրավունքի վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ի կատարումն Էլեկտրակառավարման հուսալիության ծրագրի շրջանակներում իրականացվող «Նոյեմբերյան» և «Լալվար» 110 կՎ ԷՀՕԳ փոխարինման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի № 599-Ն որոշման պահանջների՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին թաղամասի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականութուն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության

06-002-0202-0078 կադաստրային ծածկագրով, 0.01426 հա այլ հողատեսքը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի հողերի, հետագայում, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ուղղակի վաճառքի կարգով օտարել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, մեկ քառակուսի մետրը 342 (երեք հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ արժեքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, «Նոյեմբերյան» և «Լալվար» 110 կՎ ԷՀՕԳ փոխարինման ծրագրի շրջանակներում էլեկտրահաղորդման օդային գծի 1 հենասյան կառուցման և սպասարկման համար:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 10
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 76-Ա

ՏԱՐԱԾՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով,Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածով և հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 0090404 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Կամո Աղաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Կախոյան «Շուկա» Դ/Ձ թիվ 9 բացվածքին, վերահաստեղավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, N 20/9 փոստային հասցե:
2. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, N 20 հասցեում գտնվող, «ԿԱՏԱ առևտրի տան» ՍՊԸ-ի շենքից առանձնացվող, Կամո Աղաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող, 9.2 քմ մակերեսով վերաբաժանված տարածքի բաժնեմասային սեփականության իրավունքով սպասարկման հողի մակերեսը կազմում է 1282.9:1171.4 X 9.2 =10.07մ^2:

   Բաժնային մասը՝ 9/10 որից, հողի բաժնային մասը՝ 10/1283, գույքի բաժնային մասը՝ 9/1171:
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 10
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 75-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԻ, ՀԱՐԹԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, տնտեսական սենյակը, հարթակը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 24.12.2019թ. թիվ 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Էվոյան փողոցի հյուսիս-արևելյան մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 113.43 քմ արտաքին մակերեսով (90.2 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի, տնտեսական սենյակի, հարթակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Էվոյան փողոցի հյուսիս-արևելյան մասում գտնվող, 1998թ. ինքնակամ կառուցված, 113.43 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, տնտեսական սենյակը, հարթակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00794 հա մակերեսով հողամասով:
3. Ալավերդի քաղաքի Էվոյան փողոցի հյուսիս-արևելյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, N 38/28 փոստային հասցե:

4. Ավտոտնակի զբաղեցրած 0.00794 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի, տնտեսական սենյակի, հարթակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Արթուր Օսյանին օրինականացված ավտոտնակը, տնտեսական սենյակը, հարթակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 10
ք. Ալավերդի